

«ՎԱՆԱԶՈՐԻ Զ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Զ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 16.03.2021 թ. թիվ 156 ՆԾ հրովանի



ՎԱՆԱԶՈՐԻ Զ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ

ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ

ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 1, 25.02.2021 թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 7, 27.01.2022 թ.

Առ 02.02.2022 թ. փոփոխություններով

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կրթական ծրագրերում ընդգրկված կամընտրական դասընթացների ընտրության կարգը (այսուհետ՝ Կարգ) հիմնվում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2005 թ. թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ ԿԳ (ԿԳՄՍ) նախարարի՝ 2007 թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ»-ի, «Ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույց»-ի, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի 2021-2025 թթ.-ի ռազմավարության, կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպմանը նվիրված փաստաթղթերի և ՀՀ ԿԳՄՍ հրահանգչական նամակների վրա:
2. Կարգով սահմանված դրույթների կատարումը պարտադիր է Համալսարանի ուսումնագիտական բոլոր ստորաբաժանումների համար:

II. ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Կամընտրական են համարվում Համալսարանում իրականացվող բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ուսումնական պլաններով նախատեսված դասընթացները, որոնց ուսուցումը կազմակերպվում է ուսանողների ընտրության համաձայն:
4. Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի կամընտրական դասընթացներն ուղղված են կրթական ծրագրերի վերջնարդյունքներով սահմանված կոմպետենցիաների հիմնավորմանը:
5. Համալսարանի կամընտրական դասընթացների իրականացման ~~են~~ ^{կապված} խնդիրներն են անցումը դասախոսակենտրոնից դեպի ուսանողակենտրոն ^{ուսուցման} համակարգ և Համալսարանի կրթական միջավայրի բարելավումը՝ ^{Բոլորն} ~~Բոլորն~~ ^{գործընթացի} ~~գործընթացի~~



հիմնական սկզբունքների համաձայն:

6. Կամընտրական դասընթացների իրականացման նպատակն է՝ նպաստել ուսանողների անհատական կրթական հետագծի ձևավորմանը:

7. Կամընտրական դասընթացները ներառում են կրեդիտային հենքով կառուցված տվյալ մասնագիտության (ուղղության) կրթական ծրագրերի ուսումնական պլանների առանձին կրթամասերում առավելագույնը 3 դասընթաց: Կամընտրական դասընթացները պետք է լինեն հարակից առարկաներ:

III. ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

8. Ուսանողի կողմից մեկ ուսումնական տարվա համար ընտրված կամընտրական դասընթացները պետք է կազմեն.

- բակալավրիատում՝ տարեկան ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության առնվազն 10%-ը,
- մագիստրատուրայում՝ նվազագույնը՝ 20%-ը:

9. Ուսխորհուրդը կարող է մասնակցել կամընտրական դասընթացների ընտրության գործընթացին՝ ուսանողներին խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

10. Բակալավրիատի հաջորդ ուսումնական տարվա ուսումնական պլանի յուրաքանչյուր կրթամասի կամընտրական դասընթացներից մեկի ընտրության նպատակով նախորդ ուսումնական տարվա հունվար-փետրվար ամիսների ընթացքում այդ դասընթացների համար պատասխանատու դասախոսների կողմից ներկայացվում է մեկական հակիրճ դասախոսություն:

11. Համապատասխան ղեկանատը, սպասարկող ամբիոնը կամ ամբիոնները և ուսանողների ակադեմիական խորհրդատուները կազմակերպում են կամընտրական դասընթացների ընտրության գործընթացը՝ ապահովելով տվյալ կամընտրական դասընթացի վերաբերյալ տեղեկատվության տարածումը համապատասխան կուրսի ուսանողների շրջանում:

12. Կամընտրական դասընթացների ընտրությունը ներկա ուսանողները կատարում են դասընթացների ներկայացման գործընթացից հետո ցուցակագրման միջոցով համաձայն հավելված 1-ում ներկայացված կամընտրական դասընթացների ընտրության հայտի: Բակալավրիատի և մագիստրատուրայի կամընտրական դասընթացը համարվում է



ընտրված, եթե.

- համահամալսարանական և մասնագիտական դասընթացների համար ուսանողը լրացրել է կամընտրական դասընթացների ընտրության հայտը (Հավելված 1),

- մասնագիտական դասընթացների համար գրանցվել է ուսանողական խմբերի 2/3-ը, առկա է համապատասխան գրանցում (Հավելված 2),

- ընտրել է ներկա ուսանողների մեծամասնությունը:

13. Բակալավրիատի հաջորդ ուսումնական տարվա կամընտրական դասընթացներին գրանցվելու վերջնաժամկետն է տվյալ ուստարվա մարտի 31-ը:

14. Մագիստրատուրայի առաջին կուրսի կամընտրական դասընթացների ընտրությունը կատարվում է տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ից 5-ն ընկած ժամանակահատվածում:

15. Մագիստրատուրայի առաջին կուրսի կամընտրական դասընթացների ընտրությունը կատարվում է ուսանողներին ներկայացվող տվյալ դասընթացների հիման վրա:

16. Համահամալսարանական կամընտրական դասընթացների խմբերը ձևավորվում են միջֆակուլտետային սկզբունքով:

17. Եթե համահամալսարանական կամընտրական տվյալ տեսական դասընթացի համար գրանցված ուսանողների թիվը 45-50-ից, իսկ գործնական դասընթացի համար 21-ից պակաս է, խումբը չի ձևավորվում, և ուսանողներին տրվում է կամընտրական դասընթացներին գրանցվելու վերջնաժամկետից հետո 5 օր ժամանակ՝ այլ կամընտրական դասընթացների համար ձևավորված խմբերում ընդգրկվելու համար:

18. Եթե կամընտրական տեսական դասընթացի համար գրանցվել են ավելի քան 50, իսկ գործնական դասընթացի համար 21 և ավելի թվով ուսանողներ, թույլատրվում է տվյալ կամընտրական դասընթացի համար կազմավորել երկրորդ խումբ:

19. Բակալավրիատի կամընտրական դասընթացների ուսանողական խմբերը ձևավորվում են՝ հիմք ընդունելով սույն կարգի 12-րդ կետի դրույթները:

20. Եթե հաստատված ժամկետներում ուսանողը չի գրանցվել կամընտրական դասընթացներից և ոչ մեկի համար, ապա նա, դեկանի զեկուցագրի հիման վրա, հրամանագրվում է այն կամընտրական դասընթացի խմբում, որտեղ ուսանողների գրանցման ավարտից հետո կան ազատ տեղեր:



21.Գրանցման ժամկետները լրանալուց հետո Համալսարանի դեկանատները մինչև մարտի 10-ը կրթական գործընթացների կառավարման բաժին են ներկայացնում հրամանի նախագիծ՝ ըստ ընտրված դասընթացների ձևավորված խմբերը հրամանագրելու նպատակով: Կից ներկայացվում են ուսանողների ցուցակները:

22.Ընթացիկ ուսումնական տարում ուսանողի կողմից ընտրված կամընտրական դասընթացները, որպես կանոն, փոփոխման ենթակա չեն: Բացառիկ դեպքերում (ուսանողի՝ հիմնավոր պատճառաբանմամբ, գրավոր դիմումի հիման վրա) նրան թույլատրվում է փոփոխություններ մտցնել իր կողմից ընտրված կամընտրական դասընթացների ցուցակում:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

23.Սույն կարգը ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Համալսարանի գիտական խորհրդի կողմից 02.05.2018 թ. ընդունված «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի կրթական ծրագրերում ընդգրկված կամընտրական դասընթացների ընտրության կարգ»-ը:



ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ
(համահամալսարանական դասընթացների համար)

Դասընթացը ընտրող ուսանողների ցանկ

Մասնագիտություն _____ կուրս _____ ուստարի _____ կիսամյակ

Դասընթացի անվանումը		Գրանցված ուսանողի ԱԱՀ	Ստորագրություն
համահամալսարանական	մասնագիտական		
Դասընթացի անվանումը		Գրանցված ուսանողի ԱԱՀ	Ստորագրություն
համահամալսարանական	մասնագիտական		

_____ Ուսանող _____
(ամաթիվ) (ուսանողի անուն, ազգանուն) (ստորագրություն)

Համաձայնեցված է՝

Դեկան _____ Ամբիոնի վարիչ _____ Ակադեմիական խորհրդատու _____
(ստորագրություն) (ստորագրություն) (ստորագրություն)



Հավելված 2

«Հաստատում եմ» ՎՊՀ ուս. աշխ.

զծով պրոռեկտոր, _____

« » _____ 202...թ.

ՑՈՒՑԱԿ

ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՎԱԾ ՎՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

I. ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

Դասընթաց	Ամբիոն	Դասախոս	Ուսանողի ԱԱՀ	Մասնագ.	Կուրս	Կիսամյակ
Դասընթաց						
Դասընթաց						

II. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Դասընթաց	Ամբիոն	Դասախոս	Ուսանողի ԱԱՀ	Մասնագ.	Կուրս	Կիսամյակ
Դասընթաց						
Դասընթաց						

